ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
RA MINISTRY OF JUSTICE

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ

| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 1.1.** Զինված ուժերում ամրապնդել հանդուրժողականության և փոխադարձ հարգանքի մթնոլորտը՝ որպես ԶՈՒ-ում կյանքի իրավունքի իրացման հիմնական բաղադրիչ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
|---|---|---|---|---|
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում մշակվել է զինված ուժերում զինվորական կարգապահության կարևորության վերաբերյալ 2 տեսաձայնագրություն, սակայն դեռ չեն տարածվել զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև ավագ դպրոցներում:<br>Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են «Զինված ուժերում ոչ ֆորմալ փոխհարաբերությունների վարքային նորմերի և զինվորների մոտ քրեական ենթամշակույթի դրսևորման սոցիալական և հոգեբանական հիմնախնդիրները», (որտեղ անդրադարձ է կատարվել նաև «Կյանքի իրավունք» թեմային), ինչպես նաև «Կյանքի իրավունք և վատ վերաբերմունքի արգելք» թեմաներով երկօրյա դասընթացներ:<br>Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի հետ (DCAF) համագործակցության շրջանակներում «Զինված ուժերում հոգեկան առողջության ամրապնդում և ինքնասպանությունների կանխարգելում» թեմայով իրականացվել է վերապատրաստում սպա-հոգեբանների և բարձր հրամանատարական կազմի համար:<br>Վերապատրաստվել է սպա հոգեբանների 40%-ը: | | 1.Մշակվել է զինված ուժերում զինվորական կարգապահության կարևորության վերաբերյալ 2 տեսաձայնագրություն:<br><br>2.Վերապատրաստվել է սպա-հոգեբանների 20%-ից ավելին: | Մշակվել և զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև ավագ դպրոցներում տարածվել է զինված ուժերում զինվորական կարգապահության կարևորության վերաբերյալ տեսաձայնագրություն (սոցիալական հոլովակ):<br><br>Վերապատրաստվել է սպա-հոգեբանների 40%-ը: |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 1.2.** Բարձրացնել կյանքի իրավունքի, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ազատությունից զրկված անձանց իրազեկվածությունը | ՀՀ արդարադատության նախարարություն |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |

| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Համապատասխան | Մասամբ համապատասխան | Ապահովված |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Միջազգային գործընկերների աջակցությամբ մշակվել և «Աբովյան», «Արմավիր», «Սևան», «Արթիկ» և «Վանաձոր» ՔԿՀ-երում փակցվել են ազատությունից զրկված անձանց հիմնարար իրավունքների վերաբերյալ բացատրական պաստառներ:<br>Մշակվել է նաև ազատությունից զրկման վայրերում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի բացարձակ արգելքի վերաբերյալ տեսաձայնագրություն, որը ենթակա է հրապարակման: | | Ազատությունից զրկված անձանց իրավունքների վերաբերյալ պաստառները փակցվել են ազատությունից զրկման վայրերի ևս 40%-ում:<br>Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ տեսաձայնագրությունը ենթակա է հրապարակման: | Պաստառները փակցվել են ազատությունից զրկված անձանց համար հասանելի վայրերում:<br>Տեսաձայնագրությունը ենթակա է հրապարակման: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.1.** Ազատությունից զրկման վայրերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |

| Կարգավիճակ | Կատարված է մասնակի | Մասամբ համապատասխան | | Չի ապահովվել |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2024թ. դեկտեմբերի 5-ին: Վերադարձվել է և կրկնին ներկայացվել: | Նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի կալանավորված և ձերբակալված անձանց պահման վայրերի ներքին կանոնակարգերում նախատեսել անանուն հաղորդումներ ներկայացնելու, դրանք ընդունելու պայմանները, միջոցները և ընթացակարգերը, ինչի արդյունքում էլ կստեղծվեն պայմաններ համապատասխան հաստատություններում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու համար: Կներդրվեն այնպիսի | | Նախագծերի փաթեթը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը: Ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2024թ. դեկտեմբերի 5-ին: Վերադարձվել է և կրկնին ներկայացվել: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան նման դեպքերում չխուսափել հաղորդումներ ներկայացնելուց և չկաշկանդվել այդ հարցում՝ լիարժեք իրացնելով իրենց իրավունքները: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.2.** Զինված ուժերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ՝ կատարելագործելու խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքի իրականացումը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն** | Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում պատրաստվել և ներդրվել է «Համազգեստով քաղաքացի» բջջային հեռախոսի հավելվածը և գտնվում է պիլոտային գործարկման փուլում: Հավելվածը | «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **(բացատրական նշում)** | Պաշտպանության նախարարությունում ծառայելու է որպես անանուն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ: ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի կազմում գործում է ՊՆ «Թեժ գիծ»-ը (հեռ.՝ 1-28, 012210000): ՊՆ «Թեժ գիծ»-ը 2024 թվականի 2-րդ կիսամյակից գործարկվել է պիլոտային 24/7 ռեժիմով՝ հետագայում ներդրման նպատակով: Այն հանդիսանում է ինչպես քաղաքացիների և զինծառայողների համար կոռուպցիայի, բռնության, հանցակազմի հատկանիշներ պարունակող կամ արագ արձագանքման ենթակա որևէ հարցի շուրջօրյա տեղեկատվական, այնպես էլ անանուն հաղորդումներ ներկայացնելու հարթակ: Որպես ներքին և արտաքին ազդարարման պատասխանատու՝ 2024 թվականի սկզբից ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնի պետի տվյալները հստակեցվել և տեղադրվել են ՊՆ պաշտոնական կայքէջի տեսանելի հատվածում: Հաղորդումները ուղարկվում են hotline@mil.am էլեկտրոնային հասցեին: | մասին» ՀՀ օրենքում, հարակից օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների փաթեթ չի մշակվել, քանի որ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է: Կիրառվել են պրակտիկ միջոցներ: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.3.** Հոգեբուժական հաստատություններում և տուն-ինտերնատներերում ներդնել խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ, ինչպես նաև մշակել արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց ու սահմանել այդ ձևաթղթեն իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Համապատասխան | | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ԱՍՀ նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու, ինչպես նաև ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգերը հաստատելու մասին» հրամանի նախագիծ:<br>Միաժամանակ, գործողության առավել վաղ իրականացման անհնարինությունը պայմանավորված էր լիազորող նորմի բացակայությամբ. «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխությունը կատարվել էր 2024 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-414-Ն օրենքով, որն ուժի մեջ էր մտել 2024 թվականի նոյեմբերի 11-ին: | Անանուն հաղորդումների ներկայացման իրավական կարգավորումների նպատակով «Բնակչության սոցիալական պաշտպանության տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի հաստատություններում շահառուների նկատմամբ խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու, ինչպես նաև ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգերը հաստատելու մասին» հրամանի նախագիծը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դրվել է ներքին շրջանառության մեջ: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.4.** Կատարելագործել հոգեբուժական և խնամքի հաստատություններում շահառուի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման իրավական կարգավորումները՝ հստակեցնելով ուժի կիրառման հիմքերը, սահմանները, բոլոր հնարավոր իրավիճակները և եղանակները | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Հոգեբուժական և խնամքի հաստատություններում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի նախագիծը, որը Առողջապահության նախարարության 23.12.2024թ. թիվ ԱԱ/02.1/37921-2024 գրությամբ ներկայացվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարծիքի:<br>Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարծիքները ստանալուց և ամփոփելուց հետո, վերոնշյալ նախագիծը | Արդյունքում կհաստատվի միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ «Հոգեբուժական և խնամքի հաստատություններում հոգեկան առողջության խնդիր | | «Հոգեբուժական և խնամքի հաստատություններում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կներկայացվի Արդարադատության նախարարությանը՝ պետական փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով: | ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական ուժի և զսպման միջոցների գործադրման ընթացակարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանը: | | ընթացակարգի» առկայություն: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.5.** Վերապատրաստել զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:<br>Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զինված ուժերի հրամանատարական կազմին և ռազմական ոստիկանության ծառայողներին զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են «Կյանքի իրավունք և վատ վերաբերմունքի արգելք» թեմայով երկօրյա դասընթացներ:<br>Միջազգային և տեղի փորձագետների ներգրավմամբ «Կյանքի իրավունք» թեմայով պարբերաբար իրազեկման աշխատանքներ են տարվել զորամասերում: | | Վերապատրաստվել են Զինված ուժերի հրամանատարական կազմի 50%-ը, Ռազմական ոստիկանության հրամանատարակա | Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել են «Կյանքի իրավունք և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Զինված ուժերում հրամանատարական կազմի և Ռազմական ոստիկանության ղեկավար ու ոչ ղեկավար անձնակազմի վերապատրաստումներն իրականացվել են ինչպես միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակներում, այնպես էլ Պաշտպանության նախարարության ռեսուրսների միջոցով: | | ն կազմի 50%-ը և Ռազմական ոստիկանության անձնակազմի 50%-ը: | վատ վերաբերմունքի արգելք» թեմայով դասընթացներ: Վերապատրաստվել են Զինված ուժերի հրամանատարական կազմի, Ռազմական ոստիկանության հրամանատարական կազմի և Ռազմական ոստիկանության անձնակազմի 50%-ը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.6** Վերապատրաստել քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողներին, զինծառայողների նկատմամբ բռնության դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող զինվորական դատախազներին և վարույթ իրականացնող քննիչներին ու դատավորներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով:<br>Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռի զարգացնել և ամրապնդել գիտելիքները, կարողություններն ու հմտությունները վատ վերաբերմունքի արգելքի թեմայով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և չափանիշների կիրառման վերաբերյալ: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Արդարադատության նախարարի հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի 422 ծառայողների վերապատրաստումներ՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով: Միաժամանակ, նույն թեմայով համապատասխան դասընթացների շրջանակներում Արդարադատության ակադեմիայի կողմից վերապատրաստվել է 1 զինվորական դատախազ, 27 զինվորական քննիչ, 27 դատավոր: | | 2024 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում վատ վերաբերմունքի արգելքի թեմայով վերապատրաստվել են քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի 422 (20%-ից ավելին) ծառայող, 1 զինվորական դատախազ, 27 զինվորական քննիչ (20%) և 27 դատավոր (20%): | Վատ վերաբերմունքի արգելքի թեմայով վերապատրաստվել են քրեակատարողական ծառայության ղեկավար և ոչ ղեկավար կազմի ծառայողների 20%-ից ավելին, զինվորական քննիչների 20%-ը և դատավորների 20%-ը: Զինվորական դատախազների վերապատրաստումների առումով հնարավոր չի եղել ապահովել արդյունքային ցուցանիշը (20%): |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.8** Ամրապնդել ՀՀ քննչական կոմիտեի՝ խոշտանգումների քննություն իրականացնող մասնագիտացված ստորաբաժանման կարողությունները | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ քննչական կոմիտե | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | I | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ քննչական կոմիտեի խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության մասնագիտացված ստորաբաժանումը ունի 8 հաստիք, որոնցից 6-ը՝ 2023 թվականի հունվար 1-ի դրությամբ համալրված են եղել և 2 հաստիք եղել է թափուր: 2023 թվականի ընթացքում 2 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք նշանակվել են այդ պաշտոնում, որի արդյունքում նախատեսված 8 հաստիքներն էլ համալրվել են: | ՀՀ քննչական կոմիտեի խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության մասնագիտացված ստորաբաժանման բոլոր 8 հաստիքներն էլ համալրված են: | ՀՀ քննչական կոմիտեի խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության մասնագիտացված ստորաբաժանման 2 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք նշանակվել են այդ պաշտոնում, որի արդյունքում նախատեսված 8 հաստիքներն էլ համալրված են: | ՀՀ քննչական կոմիտեի խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության մասնագիտացված ստորաբաժանման 8 հաստիքները համալրվել են: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.9.** Վերապատրաստել բուժաշխատողներին, այդ թվում՝ շտապ օգնություն ծառայության և հոգեբուժական հաստատությունների աշխատակիցներին՝ վատ վերաբերմունքի արգելքի թեմայով | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Համապատասխան | Մասամբ համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ-ում գործող 93 հոգեբույժներից 84-ը անցել են շարունակական մասնագիտական զարգացումն (ՇՄԶ) ապահովող կրեդիտավորված դասընթաց, որը կազմում է շուրջ 90%-ը: Շտապ օգնության ծառայության բուժաշխատողների համար իրականացվել են ՇՄԶ կրեդիտավորված մասնագիտական դասընթացներ, որոնց արդյունքում վերապատրաստվել է շտապ օգնության աշխատակիցների 2%-ը: | | ՀՀ-ում գործող 93 հոգեբույժների 90%-ն անցել են շարունակական մասնագիտական զարգացումն (ՇՄԶ) ապահովող կրեդիտավորված դասընթաց: Վերապատրաստվել է շտապ օգնության աշխատակիցների 2%-ը: | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.10.** Բարելավել քրեակատարողական հիմնարկների, ինչպես նաև դատարաններում ազատությունից զրկված անձանց համար նախատեսված խցերի պայմանները | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ ԱՆ «Գորիս», «Վանաձոր», «Աբովյան», «Արմավիր», «Արթիկ», «Սևան» քրեակատարողական հիմնարկներում շահագործման մեջ են գտնվում թվով 580 խուց, որոնցից վերանորոգման կարիք ունեն 136 խուց: 2024թ նոյեմբերի դրությամբ 2024թ ընթացքում ՔԿԾ կողմից վերանորոգվել է ընդհանուր 45 խուց, մասնավորապես. «Նուբարաշեն» ՔԿՀ-ում՝ 2 կարանտինային խուց, տեխնիկա-տնտեսական մասի 1 կացարան (32քմ), և 2 խուց (85,86): | | Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ դատարանների վարչական շենքերի կալանախցերի ավելի քան 6.8 %-ը վերանորոգվել է: | Արդարադատության նախարարության ՔԿԾ-ի կողմից վերանորոգվել է բարելավման կարիք ունեցող 45 խուց (բարելավման կարիք ունեցող |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Վարդաշեն» ՔԿՀ-ում՝ օտարերկրացիների համար նախատեսված 2 կացարան, «Վանաձոր» ՔԿՀ-ում՝ 2 կարանտինային խուց, և 2 խցերի մասնակի վերանորոգում, «Արթիկ» ՔԿՀ-ում՝ 3 խուց, որից 1-ը՝ մասնակի: Ընթացքի մեջ է գտնվում 3 խցի վերանորոգման աշխատանքներ: «Աբովյան» ՔԿՀ-ում՝ 31 խուց, որից 1-ը՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար: | | 2024թ ընթացքում ՔԿԾ-ի կողմից վերանորոգվել է ընդհանուր 45 խուց: | խցերի 5%-ից ավելին): |

| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.11.** Բարելավել ձերբակալված և կալանավորված անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) արժանապատիվ տեղափոխման պայմանները | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
|---|---|---|---|---|
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | 2024 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում ձեռք են բերվել ձերբակալված և կալանավորված անձանց տեղափոխող միջազգային չափանիշներին համապատասխանող «Ռենոալթ Մասթեր» մակնիշի 2024թ. արտադրության թվով 22 տրանսպորտային միջոցներ, որոնցից 1-ը նախատեսված է հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տրանսպորտային միջոցները ներկայացված են եղել նաև հատուկ վերազինման: Տրանսպորտային միջոցները, ըստ առաջնահերթության, բաշխվել են համապատասխան ստորաբաժանումներին և արդեն իսկ շահագործվում են: | Ձեռք բերված տրանսպորտային միջոցների պայմանները (մատչելիություն) համապատասխանում է միջազգային չափանիշներին: | Ներքին գործերի նախարարությունն ապահովվել է ազատությունից զրկված անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) տեղափոխման համար նախատեսված 22 տրանսպորտային միջոցներով: | 2024 թվականի ընթացքում ձեռք են բերվել ձերբակալված և կալանավորված անձանց տեղափոխող միջազգային չափանիշներին համապատասխանող 22 տրանսպորտային միջոցներ, որոնցից 1-ը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | նախատեսված է հատուկ կարիքներ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 2.12.** Ընդունել «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցներ՝ միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Արդարադատության ակադեմիայի կողմից, որպես ուսումնաօժանդակ նյութ, կիրառվում են «Վատ վերաբերմունքի գործերի քննության առանձնահատկությունները միջազգային չափանիշերի, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, ինչպես նաև ազգային օրենսդրության և դատական պրակտիկայի լույսի ներքո» վերտառությամբ ուղեցույց-ձեռնարկը, Եվրոպական միության աջակցությամբ լույս տեսած՝ «Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը և քննության առանձնահատկությունները» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը, Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի ինստիտուտի հետ Ակադեմիայի համագործակցության շրջանակներում լույս տեսած՝ «Ուժեղ ցավի տարրը խոշտանգման հասկացությունում» վերտառությամբ գործնական ուղեցույցը:<br>Ուղեցույց-ձեռնարկները Արդարադատության նախարարության կողմից ուղարկվել են Քննչական կոմիտե և Գլխավոր դատախազություն՝ իրավական ակտի ուժով ընդունելու նպատակով: | Ուղեցույց-ձեռնարկները կիրառվում են Արդարադատության ակադեմիայի կողմից՝ որպես ուսումնաօժանդակ նյութ: | | Ուղեցույց-ձեռնարկները Արդարադատության նախարարության կողմից ուղարկվել են Քննչական կոմիտե և Գլխավոր դատախազություն: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.1.** Օրենսդրորեն նախատեսել կատարողական վարույթների ձգձգման հետևանքով առաջացած վնասի փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ըստ *«Ավակիմյան ընդդեմ Հայաստանի»* ՄԻԵԴ վճռի պահանջների | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Կատարողական վարույթի մասին» օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից սույն թվականի ապրիլի 11-ին և ուժի մեջ կմտնի 2025 թվականի հուլիսի 1-ից:<br>Համապատասխան չափանիշները նախատեսվել են «Կատարողական վարույթի մասին» օրենքով, որը ՀՀ Ազգային | *«Ավակիմյան ընդդեմ Հայաստանի»* ՄԻԵԴ վճռից բխող համապատասխան կառուցակարգերը նախատեսվել են 2024 | | *«Ավակիմյան ընդդեմ Հայաստանի»* ՄԻԵԴ վճռից բխող համապատասխ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ժողովի կողմից ընդունվել է սույն թվականի ապրիլի 11-ին և ուժի մեջ կմտնի 2025 թվականի հուլիսի 1-ից:<br>«Կատարողական վարույթի մասին» նոր օրենքով սահմանված հիմնական նորամուծություններն են.<br>1. Նոր օրենքով ներդրվում է կատարողական ծախսերի հաշվարկման նոր համակարգ: Գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով գանձվող կատարողական ծախսերի չափը հաստատուն է և որոշվում է բռնագանձման ենթակա գումարի չափից ելնելով՝ անկախ կոնկրետ վարույթով իրականացված գործողությունների: Նոր օրենքով ստեղծվում է ուղղակի կապ կոնկրետ վարույթով իրականացված գործողությունների և գանձվող կատարողական վճարների միջև: Եթե ներկայումս, օրինակ, դրամական պարտավորություններով մշտապես հաշվարկվում է 5 տոկոս կատարողական ծախս՝ անկախ փաստացի կատարված գործողություններից, ապա նոր օրենքով նախատեսվում է, որ եթե վարույթը հարուցվելուց հետո 2 շաբաթվա ընթացքում քաղաքացին կամովին կվճարի գումարը, ապա կգանձվի ընդամենը 2 տոկոսի չափով կատարողական վճար:<br>2. Ներդրվում է նոր մեխանիզմ, որի համաձայն՝ եթե երկու կողմերը համաձայն են, կարող են փոխադարձ համաձայնությամբ տարաժամկետել, հետաձգել պարտավորության կատարումը, փոխել կատարման կարգը կամ եղանակը: Պարտապանը այսուհետ որոշ դեպքերում կկարողանա կառավարել արգելադրված գույքը՝ վարձակալության հանձնել կամ ինքնուրույն, աճուրդից դուրս վաճառել արգելադրված գույքը՝ վարձավճարը ու վաճառքի գինը վճարելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվին:<br>3. Նոր օրենքով օրենսդիրը հրաժարվել է կատարողական թերթի ինստիտուտից՝ թե՛ դատարանին, թե՛ քաղաքացուն ազատելով բովանդակային բեռ չունեցող՝ կատարողական թերթի տրամադրման փուլից, և կատարողական թերթի փոխարեն պահանջատիրոջից կպահանջվի միայն հարկադիր կատարման | թվականի ապրիլի 11-ին ընդունված «Կատարողական վարույթի մասին» օրենքով: | | ան կառուցակարգեր ը նախատեսվել են ներպետական օրենսդրությամբ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դիմում ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն:<br>4. Ներդրվում են ոչ դրամական պահանջների հարկադիր կատարումն ապահովող նոր գործիքներ, այդ թվում՝ ստեղծվում է հնարավորություն՝ ոչ դրամական պահանջները չկատարվելու դեպքում պարտապանից հօգուտ պահանջատիրոջ գանձել դրամական տուժանք՝ աստրենտ:<br>5. Ընդհանուր գույքում պարտապանի բաժնի, իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պարտապանի բաժնեմասի առանձնացումը, որը ներկայումս իրականացվում է դատական կարգով, նոր օրենքի հիման վրա կիրականացվի կատարողական վարույթի շրջանակում: Կատարողական թերթի վերացման և մի շարք գործընթացներ դատականից կատարողական վարույթ տեղափոխելով կապահովվի դատարանների զգալի բեռնաթափում.<br>6. Նոր օրենքով ներդրվում է կատարողական վարույթի շրջանակում ֆիզիկական և իրավաբանական անձանց էլեկտրոնային ծանուցման համակարգ, սահմանվում են էլեկտրոնային կատարողական վարույթի իրավական հիմքերը: Կատարողական վարույթների անձնական գրասենյակում գրանցված քաղաքացիներն իրենց համաձայնությամբ վարույթի մասին կծանուցվեն գրասենյակի և դրան կցված էլեկտրոնային փոստի միջոցով՝ ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով, իրավաբանական անձանց, պետական մարմինների ծանուցումն էլ կիրականացվի ամբողջությամբ էլեկտրոնային: Նոր գործարկված էլեկտրոնային համակարգի հետ մեկտեղ Նախագծերի կարգավորումները կապահովեն կատարողական վարույթի ամբողջական թվայնացումը: | | | |

| | |
|---|---|
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.2.** Օրենսդրորեն նախատեսել ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, որով ամրագրվել են ազատությունից զրկված անձանց բողոքների քննության առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ և միջոցներ | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն |

| | Կատարողականի թիրախներ | Արդյունքային որակական ցուցանիշներ | Արդյունքային քանակական ցուցանիշներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|---|---|
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Գործողությունների ծրագրի 2.1 գործողության հետ համատեղ մշակվել է «Քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ, որն ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ, վերադարձվել է, ներկայում լրամշակման փուլում է: Արդարադատության նախարարության կողմից քննարկվում է նաև 3.2 գործողության կատարման նպատակով առանձին նախագիծ մշակելու հարցը: | Նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2024թ. դեկտեմբերի 5-ին, վերադարձվել է, լրամշակվել է և կրկնին ներկայացվել: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.5.** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով, հայցվորներին բոլոր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման պահանջի հայցերով՝ ի ապահովումն անձի իրավունքի պաշտպանության արդյունավետության | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | Կատարողականի թիրախներ | Արդյունքային որակական ցուցանիշներ | Արդյունքային քանակական ցուցանիշներ | Ակնկալվող արդյունքներ |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն** | Գործողությունների ծրագրի 3.5 և 3.13 գործողությունների շրջանակներում մշակվել է նախագծերի փաթեթ, շրջանառվել է շահագրգիռ պետական մարմինների միջև, ինչպես նաև տեղադրվել է հանրային քննարկման՝ e-draft.am հարթակում: Ստացված կարծիքների ամփոփմամբ Նախագծերի փաթեթը 2024թ. նոյեմբերի | Նախագծով առաջարկվել է «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածում ընդլայնել | | Վարչապետի աշխատակազմի եզրակացություններ ամփոփմամբ՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **(բացատրական նշում)** | 25-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, վերադարձվել է: Վարչապետի աշխատակազմի եզրակացություններն ամփոփվել են և փաթեթը կրկին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2025 թվականի փետրվարի 6-ին: | պետական տուրքից ազատման դեպքերը՝ ներառելով նաև մարդու հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերը և հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը կամ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը վերանայելու (վերականգնելու) վերաբերյալ հայցերը: | | Նախագծերի փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2025 թվականի փետրվարի 6-ին: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.6.** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսել տվյալ քաղաքացու, նրա ընտանիքի անդամների իրավունքը՝ դիմելու հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վճիռը վերացնելու պահանջով | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Գործողությունների ծրագրի 3.6 և 3.12 գործողությունների շրջանակներում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի փաթեթը 2024թ. հոկտեմբերի 28-ին շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև, ինչպես նաև ներկայացվել է հանրային քննարկման՝ e-draft.am հարթակում: Ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում, որից հետո փաթեթը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: | 3.6 գործողության մասով Նախագծերի փաթեթով քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճռով սահմանված ժամկետից շուտ անձի ապաքինվելու դեպքում տվյալ քաղաքացին, այդ թվում՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձը, նրա օրինական ներկայացուցիչը կկարողանա դիմում ներկայացնել ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու համար: Նախագծերի փաթեթով սահմանվում են նաև հստակ ժամկետներ ինչպես առաջին ատյանի դատարանի | | Նախագծերի փաթեթը մշակվել է, շրջանառվել է և դրվել է հանրային քննարկման: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կողմից դիմումը բավարարելու կամ մերժելու մասին, այնպես էլ քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման ենթարկելու վերաբերյալ վճռի կայացման համար: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.7.** Հասարակական կազմակերպությունների համար սահմանել դատարան դիմելու իրավունք հանրային նշանակության, կարևորության հարցերով, այդ թվում՝ ինչպես վարչական, այնպես էլ քրեական վարույթներով՝ հաշվի առնելով actio popularis սկզբունքը: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված չէ** | Չի համապատասխանում | | Չի ապահովվել |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | 2024 թվականի ընթացքում պատգամավորական նախաձեռնությամբ մշակվել է ««Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ: Նախագիծը Արդարադատության նախարարության դիտարկումների հիման վրա լրամշակվել է: | Նախագծի վերաբերյալ ԱՆ կարծիքը քննարկվել է նաև ԱԺ պատգամավորների հետ, ԱՆ առաջարկությունների հաշվառմամբ նախագիծը լրամշակվել և ԱԺ-ն | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հանդես կգա պատգամավորական նախաձեռնությամբ: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.8.** Ներդնել «դատավորի ընկեր» (amicus curie) հասկացության մեխանիզմներն ու կանոնակարգերը ներպետական իրավական համակարգում, որը կաջակցի դատարանին՝ տրամադրելով տեղեկատվություն կամ խորհրդատվություն իրավունքի կամ այլ հարակից հարցերի վերաբերյալ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել և ներկայացվել են հանրային քննարկման 2024 թվականի հոկտեմբերի 31-ին: Ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում: Քննարկվում է նախագծային կարգավորումների նպատակահարմարությունը: | Նախագծերի փաթեթով նախատեսվում է քաղաքացիական, վարչական և քրեական դատավարության ընթացքում հատուկ դիրքորոշում (amicus brief) ներկայացնելու ընթացակարգ: Նախագծերի փաթեթի համաձայն՝ հատուկ դիրքորոշումը կարող է ներկայացվել Մարդու իրավունքների պաշտպանի և ոչ | | Նախագծերի փաթեթը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առևտրային կազմակերպությունների կողմից: Ընդ որում, ոչ առևտրային կազմակերպությունները հատուկ դիրքորոշում կարող են ներկայացնել իրենց միջնորդությամբ և դատարանի թույլտվությամբ, իսկ քաղաքացիական և վարչական դատավարություններում՝ գործին մասնակցող անձի առաջարկությամբ և դատարանի որոշմամբ: Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ դիրքորոշում կարող է ներկայացնել սեփական նախաձեռնությամբ՝ դատավարության ցանկացած փուլում: Հատուկ դիրքորոշում ներկայացրած անձը գործի ելքով իրավական շահագրգռվածություն ունեցող անձն է, որը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դատարանին ներկայացնում է տեղեկատվություն իրավունքի կամ գործի հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ: Հատուկ դիրքորոշում ներկայացրած անձը սահմանափակված է գործի փաստերով և չի կարող վկայակոչել նոր փաստեր: Նախատեսվել են նաև որոշ պահանջներ, որոնց բավարարելու դեպքում ոչ առևտրային կազմակերպությունը կարող է համարվել շահագրգիռ: Հարկ է ընդգծել նաև, որ ներկայացված հատուկ դիրքորոշումը դատարանի համար պարտադիր նշանակություն չի ունենալու և կրելու է խորհրդատվական բնույթ: | | |
| **Գործողության համար և բովանդակություն** | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| **Գործողություն 3.9.** Կատարելագործել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համակարգը | | | | |
|---|---|---|---|---|
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Մշակվել են հայեցակարգի և Արդարադատության նախարարի հրամանների նախագծեր: Միաժամանակ, գործողության ամբողջական կատարման նպատակով ՀՀ քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթը մշակման փուլում է: | Նախագծերի փաթեթը գտնվում է մշակման փուլում: | | Նախագծերի փաթեթը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.10.** Ի կատարումն Դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 10-րդ կետի՝ ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր և վերահսկողություն սահմանել իրագործման նկատմամբ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Դատական դեպարտամենտի և «Մեյսիս ինֆորմեյշն սիսթեմս» ընկերության համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է ապանձնավորման ծրագրի տեխնիկական բնութագիրը: Առաջիկայում նախատեսվում է այդ տեխնիկական բնութագրով սահմանված գործիքակազմը տեղայնացնել «Դատական համակարգ» (CAST) համակարգչային ծրագրում, ինչի կապակցությամբ 2024թ. նոյեմբերի 12-ին Ընկերությանն ուղարկվել է համապատասխան գրություն:<br>Ներկայում, նախքան հիշյալ ծրագրի ամբողջական գործարկումը, Բարձրագույն դատական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ սահմանված կանոնի համաձայն՝ անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը www.court.am կայքում հրապարակվում են ապանձնավորված՝ ապահովվելով տվյալների պաշտպանությունը: | Մշակվել է ապանձնավորման ծրագրի տեխնիկական բնութագիրը: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.11.** Արդարադատության ակադեմիայում դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրում մշակել և ներդնել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններին վերաբերող առանձին և համապարփակ վերապարաստման ծրագրեր | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ) | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Հաշվետու ժամանակաշրջանում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների թեմայով վերապատրաստվել է 103 դատավոր, 15 դատավորի թեկնածու: | | Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց առնվազն 60%-ը վերապատրաստվել է զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների թեմայով: | Դատավորների և դատավորների թեկնածուների վերապատրաստման առանձին ծրագիրը հաստատվել է հաշվետու տարում: 2025 թվականից սկսած դատավորները և դատավորների թեկնածուները կվերապատրաստվեն զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների թեմայով նոր առանձին ծրագրով: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.12.** Վերանայել անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումները՝ բացառելով իրենց իրավունքներին և շահերին առնչվող այլ խնդիրներով դատարան դիմելու կամ լսված լինելու իրավունքի անհամաչափ սահմանափակումները | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | | | **Ակնկալվող արդյունքներ** |

| **Տարի** | 2024 | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | |
|---|---|---|---|---|
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Գործողությունների ծրագրի 3.6 և 3.12 գործողությունների շրջանակներում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նախագծերի փաթեթը 2024թ. հոկտեմբերի 28-ին շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև, ինչպես նաև ներկայացվել է հանրային քննարկման՝ e-draft.am հարթակում: Ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում, որից հետո փաթեթը կներկայացվի Վարչապետի աշխատակազմ: | 3.12 գործողության մասով Նախագծերի փաթեթով առաջարկվում է մեղմացնել օրենսդրությամբ նախատեսված երկու ծայրահեղ հնարավորությունները՝ լիարժեք գործունակություն կամ գործունակությունից ամբողջությամբ զրկում: Առաջարկվող կարգավորումներով դատարանների համար նախատեսվում է գործունակությունը սահմանափակելու ավելի ճկուն տարբերակներ՝ հիմք ընդունելու գործունակության սահմանափակման իրավաչափ նպատակի և համաչափության սկզբունքները: | | Նախագծերի փաթեթը մշակվել է, շրջանառվել է, սակայն չի ներկայացվել Կառավարության հաստատմանը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնավորապես, ըստ նախագծային կարգավորումների՝ եթե հոգեկան խանգարումն ամբողջությամբ չի ազդում քաղաքացու՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու, դրանց հետևանքերը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու ունակության վրա, ապա քաղաքացին կարող է դատարանի որոշմամբ ճանաչվել սահմանափակ գործունակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Միջազգային չափանիշներին համահունչ՝ նախագծով նախատեսվում են նաև այն դեպքերը, երբ անձը չի կարող նշանակվել խնամակալ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | կամ հոգաբարձու՝ սահմանելով նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի կողմից խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը դատարան բողոքարկելու հնարավորությունը: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.13.** Ընդլայնել դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվող անձանց ցանկը՝ նախատեսելով պետական տուրքի վճարումից ազատում՝ հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը վերականգնելու պահանջով դատարան հայցադիմում ներկայացնելու, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու գործերով: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| **Տարի** | 2024 | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Գործողությունների ծրագրի 3.5 և 3.13 գործողությունների շրջանակներում մշակվել է նախագծերի փաթեթ, շրջանառվել է շահագրգիռ պետական մարմինների միջև, ինչպես նաև տեղադրվել է հանրային քննարկման՝ e-draft.am հարթակում: Ստացված կարծիքների ամփոփմամբ Նախագծերի փաթեթը 2024թ. նոյեմբերի 25-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, վերադարձվել է: Վարչապետի աշխատակազմի եզրակացություններն ամփոփվել են և փաթեթը կրկին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ 2025 թվականի փետրվարի 6-ին: | Նախագծով առաջարկվել է «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածում ընդլայնել պետական տուրքից ազատման դեպքերը՝ ներառելով նաև Հայաստանի | | Վարչապետի աշխատակազմի եզրակացություններ ամփոփմամբ՝ Նախագծերի փաթեթը կրկին ներկայացվել է Վարչապետի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերը և հաշմանդամության խումբ սահմանելու կամ հաշմանդամության խումբը կամ ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը վերանայելու (վերականգնելու) վերաբերյալ հայցերը: | | աշխատակազմ 2025 թվականի փետրվարի 6-ին: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 3.14.**Վերանայել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |

| **Կիսամյակ** | II | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Չի ապահովվել |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ գործող միջգերատեսչական խմբի կողմից մշակվել են հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման խնդիրների և լուծումների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, որոնք հավանության են արժանացել նաև Վարչապետի կողմից: Նշված հայեցակարգային ուղղությունների հիման վրա նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները մեկնարկել են և 2025 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում հնարավոր կլինի այն ներկայացնել Վարչապետի աշխատակազմ: | Մշակվել է ««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը և 2025 թվականի հունվարի 22-ին ներկայացվել է Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության համատեղ փորձագիտական կարծիքի: | | Օրենսդրական փաթեթը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը: |

| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.1** «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքում սահմանել խտրականության հասկացությունը, տեսակները, դրանից պաշտպանության միջոցները մեխանիզմները, իրավահավասարության հարցերով զբաղվող մարմնի կազմավորման/ գործող մարմիններից որևէ մեկի կազմում կառույցի ստեղծման, գործունեության երաշխիքները՝ միջազգային չափանիշներին համապատասխան: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
|---|---|---|---|---|
| | **Կատարողական ցուցանիշներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Նախագիծը 2024թ. հուլիսի 31-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, վերադարձվել է: Վարչապետի աշխատակազմի նկատառումներն ամփոփման փուլում են, որից հետո նորից կներկայացվի Կառավարության հաստատմանը: | Նախագծով նախատեսվում են խտրականության հասկացությունը և տեսակները, կանոնակարգվում են իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության ոլորտում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պարտականությունները, խտրականությունից | | Նախագիծը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը, 2024թ. հուլիսի 31-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | իրավական պաշտպանության հիմքերը: Նախագծային կարգավորումներով նախատեսվում է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մարմնի, գործունեությունը և լիազորությունները՝ նկատի ունենալով նմանօրինակ լուծման ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ առումներով ընդունելի լինելը և այլ երկրների փորձը (օրինակ ՝ Վրաստան, Չեխիա, Մոնտենեգրո, Ֆինլանդիա): Առանցքային նշանակություն ունի նախագծին հարակից՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերով խտրականության գործերի քննության հատուկ վարույթների նախատեսումը, որոնցով սահմանվում են նաև ապացուցման բեռի բաշխման կանոնները: Այսպես, նշված նախագծերով նախատեսվում է, որ հայցվորը ներկայացնում է տվյալներ կամ փաստեր, որոնք առերևույթ (prima facie) հիմնավորում են իր կողմից խտրականություն գնահատվող գործողության, | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | անգործության, վերաբերմունքի կամ կարգավորման առկայությունը, իսկ խտրականության բացակայության ապացուցման բեռը կրում է պատասխանողը: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.2.** Դատավորների, քննիչների, դատախազների և ոստիկանների (համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները) համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերսբերյալ: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
| | **Կարգավիճակի ցուցանիշներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունք** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման թեմաներով վերապատրաստվել է 130 դատավոր, 16 դատավորի թեկնածու, 34 դատախազ և 133 քննիչ: ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրում՝ 2024թ. երկրորդ կիսամյակում, «մարդու և քաղաքացու անձնական իրավունքներն ու ազատությունները, դրանց իրականացման երաշխիքները և խտրականության արգելքի | | Խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման թեմաներով վերապատրաստվել է | Խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման թեմաներով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սկզբունքը» թեմայով՝ (ընդհանուր 4 ակադեմիական ժամ) վերապատրաստվել են ոստիկանության թվով 35 ծառայողներ:<br>Բացի այդ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության նոր ծառայության ձևավորման համատեքստում՝ ոստիկանության ծառայողների համար նախատեսված 2-ամսյա վերապատրաստման շրջանակներում իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով վերապատրաստվել են ոստիկանության թվով 530 ծառայողներ:<br>Միաժամանակ,<br>հաշվետու ժամանակահատվածում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ «Հայկական համայնքային և քրեական ոստիկանության ծառայողների համար կարողությունների զարգացում», «Խտրականության, ատելության խոսքի և ատելության շարժառիթով հանցագործությունների քննության առանձնահատկությունները» և «Ձերբակալված անձանց պահման վայրերում խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի դեպքերի կանխարգելում» թեմաներով անցկացված վերապատրաստումներին մասնակցել են ոստիկանության թվով 29 ծառայողներ: Այսպիով՝ նախատեսված թեմաներով վերապատրաստվել է ոստիկանության 594 ծառայող, ինչով միջոցառման կատարողական թիրախն ամբողջությամբ ապահովվել է:<br>Միաժամանակ, վերապատրաստում անցած բոլոր ծառայողները վերապատրաստման ավարտին անցել են գիտելիքների ստուգում՝ ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների և քննությունների ձևով, ինչի արդյունքներով վերապատրաստում անցած ծառայողները գրանցել են 80-100% իմացության մակարդակ: | | 130 դատավոր, 16 դատավորի թեկնածու, 34 դատախազ, 133 քննիչ, ինչպես նաև ոստիկանության 635 ծառայող:<br>Վերապատրաստումից հետո իրականացված գիտելիքների ստուգման արդյունքում վերապատրաստվածն երը ցուցաբերել են 80-100% իմացություն: | վերապատրաստ ված դատավորների, քննիչների և դատախազների թիվն աճել է 60%-ով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Գործողության համարը և բովանդակությունը**<br><br>**Գործողություն 4.3.** Բժշկական, կրթական, սոցիալական ոլորտի աշխատողների համար շարունակել իրականացնել վերապատրաստումներ խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով<br>Վերապատրաստումների կազմակերպումն ու անցկացումը հնարավորություն կընձեռեն շարունակաբար կատարելագործել գիտելիքները, հմտություններն ու կարողությունները իրավահավասարության ապահովման, խտրականության արգելքի թեմաներով միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված մեխանիզմների և միջոցների վերաբերյալ: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Վերապատրաստված նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների և հանրակրթական դպրոցների ուսուցիչների թիվը աճել է 60%-ով, իսկ սոցիալական ոլորտի աշխատողներինը՝ 187-ով (60%):<br>209 բուժաշխատող (18%) մասնակցել է «Բժշկական գործունեության իրավական ապահովումը» ՇՄԶ կրեդիտավորված դասընթացին, որի կրթական ծրագրում ներառված են խտրականության արգելքի և իրավահավասարության ապահովման վերաբերյալ թեմաներ: | Համապատասխան ոլորտների աշխատողների համար նախատեսված վերապատրաստրումներն իրականացվել են խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովմանն առնչվող թեմաների ներառմամբ: | Վերապատրաստված կրթական ոլորտի աշխատողների և սոցիալական աշխատողների թիվն աճել է 60%-ով, իսկ բուժաշխատողներինը ՝ 18%-ով: | Խտրականության արգելքի, իրավահավասարության ապահովման թեմաներով վերապատրաստված կրթական և սոցիալական ոլորտի աշխատողների թիվն աճել է 60%-ով, իսկ բուժաշխատողներինը՝ 18%-ով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Գործողության թիվ և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.4.** Շարունակել բարձրացնել իրավահավասարության, բոլոր հիմքերով խտրականության արգելքի վերաբերյալ իրազեկվածությունը հանրության շրջանում | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՄԱԶԾ-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի աջակցությամբ մշակվել և Արդարադատության նախարարության կողմից տարածվել է խտրականության արգելքի վերաբերյալ 2 տեսաձայնագրություն: Խտրականության արգելքի վերաբերյալ ևս մեկ տեսաձայնագրություն վերջնականացման փուլում է: | Մշակվել է 2 տեսաձայնագրություն: Մյուս տեղեկատվական նյութերը վերջնականացվում են: | | Մշակվել է խտրականության արգելքի վերաբերյալ 2 տեսաձայնագրություն և տարածվել սոցիալական ցանցերի միջոցով: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.5.** Ատելության խոսքի առավել մեղմ դրսևորումների համար սահմանել վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցներ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |

| **Կիսամյակ** | II | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ ապահովված | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը 2024թ. հոկտեմբերի 31-ին շրջանառվել է շահագրգիռ պետական մարմինների միջև, ինչպես նաև ներկայացվել է հանրային քննարկման: Ստացված կարծիքները գտնվում են ամփոփման փուլում: Նախագծային կարգավորումները վերանայման փուլում են: | Նախագծով առաջարկվում է ատելության խոսքի արգելքի վերաբերյալ կարգավորում նախատեսել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի «Հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ» վերտառությամբ 13-րդ գլխում՝ հաշվի առնելով արարքի հասարակական բնույթը, այդ թվում՝ վայրը, իրադարձության բնույթը, բովանդակությունը և այլն: Առաջարկվում է սահմանել վարչական իրավախախտման | | Նախագիծը մշակվել է, շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առանձին տեսակ՝ խտրականություն կամ ատելություն հարուցող խոսքի համար, որի կիրառության համար սահմանված կլինի ոչ այնպիսի բարձր շեմ, ինչպես քրեական հանցագործության համար՝ ընդլայնելով ատելության խոսքի կարգավորման շրջանակները: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.6.** Շարունակել իրականացնել իրազեկման արշավներ, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ՝ ուղղված ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և կարծիքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՄԱԶԾ-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի աջակցությամբ մշակվել են ատելության խոսքի, դրա դրսևորումների վերաբերյալ տեղեկատվական պաստառներ, որոնք տարածվելու են | | Մշակվել են ատելության խոսքի, դրա դրսևորումների վերաբերյալ 2 տեղեկատվական պաստառ: Եվս 3 | Ատելության խոսքի վերաբերյալ մշակվել է 2 տեղեկատվական նյութ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | սոցիալական ցանցերի միջոցով և կփակցվեն հանրային նշանակության վայրերում 2025 թվականի մարտին: Միաժամանակ, վերջնականացման փուլում են կանանց նկատմամբ ատելության խոսքի դրսևորումների վերաբերյալ տեղեկատվական նյութերը: | | պաստառ վերջնականացման փուլում են: | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.7.** Ոստիկանության, քննչական մարմինների, դատախազության համար, մշակել և հաստատել խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության ուղեցույցներ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br>ՀՀ ներքին գործերի նախարարություն<br>ՀՀ քննչական կոմիտե (համաձայնությամբ)<br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի վերաբերյալ մեկնաբանություն** | Միջազգային գործընկերների աջակցությամբ մշակվել են ուղեցույցներ, որոնք նախատեսված են խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության համար: Ուղեցույցները տպագրման փուլում են և կներկայացվեն ՆԳՆ, Գլխավոր դատախազությանը, ինչպես նաև Քննչական կոմիտեին: | | | Մշակվել են խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների քննության շարժառիթով գործերի քննության վերաբերյալ ուղեցույցները և ներկայացվել են |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համապատասխան մարմիններին: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 4.8.** Ստեղծել օրենսդրական երաշխիքներ ազգային փոքրամասնությունների իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար, որով ներպետական իրավական համակարգում կնախատեսվի ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը վերաբերող առանձին և համապարփակ օրենսդրություն | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | | | |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Չի ապահովվել |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագծի վերաբերյալ 2024թ. հունիսին հաստատվել է Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ ժողովրդավարության և մարդկային արժանապատվության հարցերով տնօրինության (DGII) համատեղ կարծիքը, որի հիման վրա՝ «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծը լրամշակվել է: Ենթակա է շրջանառման: | Նախագծով տրվել է Հայաստանի Հանրապետություն «Ազգային փոքրամասնություննե րին պատկանող անձ» հասկացության սահմանումը՝ միջազգային փորձի և տարբեր երկրների օրենսդրության | | Օրենդրական փաթեթը չի ներկայացվել Ազգային ժողովի ընդունմանը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ուսումնասիրության հիման վրա (օրինակ՝ Լեհաստան, Հունգարիա): Միաժամանակ, նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ցանկը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նախագծով միջազգային իրավական փաստաթղթերին համահունչ նախատեսվել են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հիմնական շրջանակը: | | |

| **Գործողության համար և բովանդակություն** | | **Պատասխանատու մարմին** | | |
|---|---|---|---|---|
| **Գործողություն 5.1.** Երաշխավորել ռազմական գործողություններից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին հոգեբանական անվճար օգնության շարունակական տրամադրումը և դրա հաշվառումը | | ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | 2024 | | | |
| **Կիսամյակ** | II | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված չէ** | Չի համապատասխանում | Չի համապատասխանում | Չի ապահովվել |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ ներքին գործերի նախարարությունը շահագրգիռ միջազգային կազմակերպությունների հետ նախաձեռնել է համապատասխան աշխատանքներ՝ գործողության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման հնարավորությունը քննարկելու նպատակով: Քննարկումներ են իրականացվել Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի իրավասու ներկայացուցիչների հետ:<br>Միաժամանակ, ՀՀ պաշտպանության նախարարությունից աշխատանքային կարգով տեղեկացվել է, որ պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամներին, հոգեբանական անվճար օգնություն ստացած անձանց հաշվառելու պարտավորության սահմանելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը հաստատվել է, սակայն այն դեռևս Ներքին գործերի նախարարություն չի ստացվել: | | Հոգեբանական անվճար օգնություն ստացող պատերազմից տուժած անձանց և նրանց ընտանիքի անդամների թվի պարբերական աճ չի գրանցվել: | |

| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.2.** Երաշխավորել գերությունից վերադարձած անձանց/ զինծառայողների ֆիզիկական և հոգեկան առողջական օգնության համակարգը՝ տրամադրելով անհատական, երկարաժամկետ և հետևողական աջակցություն | | Պատասխանատու մարմին<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
|---|---|---|---|---|
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Գերությունից վերադարձած զինծառայողներ ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում բժշկական հետազոտման չեն ենթարկվել: Գերությունից վերադարձած անձանց (թվով 32) վերջին հետազոտությունները ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ում իրականացվել են 2023 թվականի դեկտեմբեր ամսին: | 2024 թվականին գերությունից վերադարձած անձինք չեն եղել: | | Գերությունից վերադարձած անձինք օգտվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջության առաջնային պահպանման ծառայություններից: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | 2024 թվականին գերությունից վերադարձած անձինք չեն եղել: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.4.** Իրականացնել հոգեկան առողջության վերապատրաստումներ սպա-հոգեբանների համար՝ շեշտադրելով գործնական խնդիրները: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ պաշտպանության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Սպա-հոգեբանների մասնագիտական կարողությունները զարգացնելու նպատակով՝ միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ:<br>Զինված ուժերի սպա-հոգեբանները՝ առանձին ծրագրերով, ՀՀ պաշտպանության նախարարության Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում, «Ինթրա» հոգեկան առողջության և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոններում ներգրավվել են վերապատրաստման դասընթացների: Վերապատրաստումներն իրականացվել են նաև ՀՀ պաշտպանության նախարարության և Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Մ. Մելքոնյանի անվան ռազ-մամարզական վարժարան ՊՈԱԿ-ում միջազգային-իրավական չափանիշների հիման վրա և ապահովել են վերապատրաստված սպա-հոգեբանների և ապագա սպա-հոգեբանների թվի աճ առնվազն 70%-ով՝ ի համեմատություն ելակետային տվյալների:<br>Սպա-հոգեբանները վերապատրաստվել են ամբողջ ծավալով: | | Սպա-հոգեբանները վերապատրաստվել են ամբողջ ծավալով՝ նախատեսված 60%-ի փոխարեն: | Սպա-հոգեբանները վերա-պատրաստվել են ամբողջ ծավալով: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.5.** Մշակել բժշկական գաղտնիքին վերաբերող տեղեկատվական ձեռնարկ բուժաշխատողների համար և հաստատել ենթաօրենսդրական իրավական ակտով | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Ցուցումները (մեթոդական ուղեցույցը) մշակված են ներպետական և միջազգային լավագույն փորձին և չափանիշներին համահունչ և հաստատված են Առողջապահության նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 7592–Լ հրամանով: Ցուցումները (մեթոդական ուղեցույցը) մշակվել է Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի «Մարդու իրավունքների պաշտպանությունը կենսաբժշկության ոլորտում» ծրագրի աջակցությամբ: | | Հրամանը տեղադրվել է Առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում: Մշակված մեթոդական ուղեցույցը պաշտոնական գրությամբ ներկայացվել է Առողջապահության նախարարության ենթակայության և որոշ մասնավոր հիվանդանոցային բժշկական կազմակերպություններին: | Առողջապահության նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 7592–Լ հրամանով հաստատվել է բժշկական գաղտնիքի պատշաճ մշակման մեթոդական ուղեցույցը և այն տեղադրվել է Առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում, ինչպես նաև ներկայացվել է Առողջապահության նախարարության ենթակայության և որոշ մասնավոր հիվանդանոցային բժշկական կազմակերպություններին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.6.** Ապահովել պացիենտի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հասանելիությունը | | Պատասխանատու մարմին<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **I** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Մինչև 2020 թվականը պացիենտին հասանելի է եղել իր պորտալը, որի կիրառումը մեծ արդյունավետություն չի ապահովել՝ գրացվածների քիչ քանակի պատճառով:<br>2020 թվականից ներդրված է հավելվածը, որը շարունակակաբար կատարելագործվում է:<br>Պացիենտին հասանելի են համակարգ մուտագրված այցերը: | Գործիքը մատչելի է և հասանելի է ցանկացած քաղաքացու պորտալի և հավելվածի միջոցով: | | Գործիքը շարունակաբար կատարելագործ վում է: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.7.** Կազմակերպել և իրականացնել հանրային իրազեկման արշավներ վճարովի և անվճար բժշկական ծառայությունների և դեղերի մասին, ինչպես նաև առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Կազմակերպվել և հրապարակվել են հանրային իրազեկման նյութեր, հարցազրույցներ՝ անվճար և վճարովի բժշկական ծառայությունների, դեղապահովման մասին, ինչպես նաև առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ:<br>Անվճար և վճարովի բժշկական ծառայությունների մասին՝ 49, դեղապահովման թեմայով՝ 21, առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ 4 հանրային իրազեկման նյութեր և տեսաձայնագրություններ են կազմակերպվել, որոնք տարածվել են ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերի միջոցով, այդ թվում՝ 5 ասուլիս, ռեպորտաժներ, հոլովակներ, հաղորդագրություններ, հարցազրույցներ:<br>Երկրորդ կիսամյակի ընթացքում Առողջության համապարփակ ապահովագրության վերաբերյալ իրազեկման աշխատանքների որոշակի նվազեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բարեփոխման մեկնարկն ակտիվ փուլում չէ: | | Անվճար և վճարովի բժշկական ծառայությունների մասին առնվազն 40, դեղապահովման թեմայով՝ 17, առողջության համապարփակ ապահովագրության ներդրման վերաբերյալ 8 հանրային իրազեկման արշավների նյութեր և տեսաձայնագրություններ են մշակվել, որոնք տարածվել են ԶԼՄ-ներով և սոցիալական ցանցերի միջոցով: | Բարձրացվել է անվճար և վճարովի բժշկական ծառայություններ ի, դեղերի և առողջության համապարփակ ապահովագրության մասին հանրային իրազեկման աստիճանը: |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 5.8.** Ստեղծել տեղեկատվական համակարգ կամ առկա համակարգում ապահովել պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարային սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությանը | ՀՀ առողջապահության նախարարություն |

| | Կատարողականի թիրախներ | Արդյունքային որակական ցուցանիշներ | Արդյունքային քանակական ցուցանիշներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարի սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում՝ սոցիալական փաթեթ, պետական պատվեր, հրապարակային օֆերտա, համավճար: | Մշակվել է տեղեկատվական համակարգի տեխնիկական բնութագիրը: | | Պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարի սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է: |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 5.9.** Բարձրացնել հանրային իրազեկվածությունը պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին<br>Իրազեկվածությունը նպատակ ունի պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ բնակչության համար ապահովել ամբողջական և մատչելի տեղեկատվություն: | ՀՀ առողջապահության նախարարություն |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Զանգվածային լրատվության, սոցիալական ցանցերի միջոցով կազմակերպվել և իրականացվել է պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին առնվազն 4 իրազեկման արշավ: Նախարարության պաշտոնական կայքի «Քո իրավունքը» բաժնում տեղադրվել է Հայաստանում պալիատիվ խնամքի վերաբերյալ տեղեկատվական հոլովակ: | | | Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին զանգվածային լրատվության, սոցիալական ցանցերի միջոցով կազմակերպել է 4 իրազեկման աշխատանք՝ տեղեկատվական նյութերի և տեսանյութերի տարածման միջոցով: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br>**Գործողություն 5.10.** Իրականացնել պալիատիվ խնամքի և ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական վերապատրաստումներ՝ բուժաշխատողների համար: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Ուռուցքաբանության» ամբիոնի կողմից 2024 թվականին իրականացվել է «Պալիատիվ բժշկություն» կրեդիտավորված դասընթաց, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում գործող 10 պալիատիվ բժիշկներից՝ 7-ը, որը կազմում է 70%: | | Վերապատրաստված բուժաշխատողների թիվն աճել է առնվազն 70%-ով: | ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի «Ուռուցքաբանության» ամբիոնի կողմից 2024 թվականին իրականացվել է «Պալիատիվ բժշկություն» կրեդիտավորված դասընթաց, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետությ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ունում գործող 10 պալիատիվ բժիշկներից՝ 7-ը, որը կազմում է 70%: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.11.** Բարձրացնել հղիության արհեստական ընդհատման ծառայությունների մատչելիությունը կանանց խոցելի խմբերի համար | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | 2024 թվականի օգոստոսի 6-ից ուժի մեջ մտած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-317-Ն) բարձրացվել է հղիության արհեստական ընդհատման մատչելիությունը ոչ միայն խոցելի խմբերի, այլ բոլոր կանանց համար՝ մասնավորապես դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը մինչև 8 շաբաթական հղիության ժամկետում այսուհետ կարող է իրականացվել նաև արտահիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում: | Օրենսդրական փոփոխությունների փաթեթը ընդունվել է Ազգային ժողովի կողմից: | | Կանանց համար հղիության արհեստական ընդհատման մատչելիության բարձրացում: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.12.** Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ օրենսդրության բարելավում | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **I** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Մշակվել է «Թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծով վերացել են «թմրամոլ», «թմրամոլություն» սոցիալական խարան առաջացնող եզրույթները, որոնք փոխարինվել են «Թմրամիջոցներից և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութերից կախվածություն ունեցող անձ», «Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածող անձ», «Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր չարաշահող անձ», «թմրաբանական հիվանդություն» եզրույթներով:<br>Նախագծով սահմանվել է օրենքի կարգավորման առարկան, ինչպես նաև թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման սկզբունքները, որոնցով առաջնորդվելու են թե՛ բուժաշխատողները, թե՛ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, թե՛ պետական մարմինները ոլորտին առնչվելիս:<br>Նախագծով նախատեսվել են այնպիսի կարևորագույն դրույթներ, ինչպիսիք են թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում | Մշակվել է «Թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում են թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում ստացող անձանց՝ պացիենտների կարգավիճակը, կատեգորիաները, ինչպես նաև վերջիններիս | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ստացող անձանց՝ պացիենտների կարգավիճակը, կատեգորիաները, ինչպես նաև վերջիններիս իրավունքների և պարտականությունների ծավալը բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս: Նախագծով ներկայացվել են նաև չնույնականացված պացիենտներին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու առանձնահատկությունները: Նախագծով նախատեսվել են նաև պետության կողմից տրամադրվող երաշխիքները թմրաբանական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս և վճարովի հիմունքներով թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման իրականացման դեպքերը: Քանի որ թմրաբանական բժշկական օգնությունը և սպասարկումը համարվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաղադրատարր, ապա Նախագծով կարևորվում է նաև Կառավարության լիազորությունների ամրագրումը թմրաբանական հիվանդություն ունեցող անձանց թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման և սոցիալական պաշտպանության ոլորտներում: Նախագծով նախատեսվել է նաև թմրաբանական բժշկական օգնության և սպասարկման ձևերը և պահանջները, ներկայացվել է թմրաբանական բժշկական օգնության տրամադրման հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևերը և վերջիններիս ուղղությունները: | իրավունքների և պարտականություննե րի ծավալը բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.13.** Թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց և թմրամիջոցներ ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործողների թվաքանակի նվազեցման և առանց թմրամիջոցների առողջ հասարակություն ունենալու վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | | | |

| **Տարի** | **2024** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Չի ապահովվել |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգը և հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին որոշում) որոշման պահանջների և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի N 2456-Ա/2՝ «5-11-րդ դասարանների «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշիչը և ուսումնական ծրագիրը» գործածության երաշխավորելու մասին հրամանի՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը ընդգրկված է ՀՀ ուսումնական հաստատությունների առարկայացանկում: 8-ից 11-րդ դասարանների ծրագրերում ընդգրկված են առողջ ապրելակերպի՝ ներառյալ թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման ու չարաշահման վտանգավորության, թմրամիջոցների օգտագործման վնասակար հետևանքների վերաբերյալ նյութեր:<br>ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ), Պարենի համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համագործակցությամբ մշակվել են «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշիչը, ուսումնական ծրագիրը և ուսուցչի ձեռնարկները: Ձեռնարկներում ընդգրկված են անչափահասների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման, թմրամոլության և դրա օգտագործման վնասակար հետևանքների, թմրամոլության կանխարգելման վերաբերյալ դասաժամեր: | Առողջ ապրելակերպի խթանման նպատակով իրականացվել են արշավներ (1-ական արշավ յուրաքանչյուր մարզում)՝ 300-ից ավել աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ:<br>Ուսումնական հաստատություններում, սովորողների և ուսուցիչների շրջանում իրականացվել է անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ:<br>«Առողջ ապրելակերպ» դասընթացի 8-ից 11-րդ դասարանների ծրագրերում ընդգրկված են առողջ ապրելակերպի՝ ներառյալ | «Առողջ ապրելակերպ» խմբակը ընդգրկված է ՀՀ ուսումնական հաստատությունների բոլոր 5-ից 11-րդ դասարանների առարկայացանկերում:<br>Մշակվել են «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշիչը, ուսումնական ծրագիրը և 5-ից 11-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկները: | 2024 թվականի առաջին կիսամյակի դրությամբ ապահովված է գործողության ելակետային տվյալների նկատմամբ փոփոխությունն ու հաշվետու ժամանակահատվածի կատարողականի թիրախով նախատեսված միջոցառումների իրականացումը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Միաժամանակ, ՀՀ 10 մարզերում Առողջ ապրելակերպի խթանման նպատակով իրականացվել են արշավներ (1-ական արշավ յուրաքանչյուր մարզում)՝ 300-ից ավել աշակերտների և ուսուցիչների մասնակցությամբ: Արշավների ընթացքում առողջ ապրելակերպի վերաբերյալ տարբեր թեմաների հետ միասին իրականացվել է նաև առողջության վրա վնասակար սովորությունների, ներառյալ թմրամիջոցների օգտագործման վնասակար հետևանքների վերաբերյալ իրազեկում: | թմրամիջոցների ու հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման ու չարաշահման վտանգավորության, թմրամիջոցների օգտագործման վնասակար հետևանքների վերաբերյալ նյութեր: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 5.14.** Մշակել «Անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը և կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ վերաբերելի իրավական ակտերում՝ նախատեսելով անհայտ կորածի իրավական կարգավիճակը, ինչպես նաև անկախ մասնագիտական կառույցի ստեղծումը, որը պետք է զբաղվի անհայտ կորած անձանց ճակատագրի և գտնվելու մասին տեղեկությունների ձեռքբերմամբ: Օրենքի նախագիծը ենթադրում է նաև անհայտ կորածի հարազատների հանդեպ պարտավորությունների ստանձնում և անհայտ կորելու հանգամանքների քննություն: | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |

| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց մասին» օրենքի նախագիծը դեռևս հանրային քննարկման չի դրվել, սակայն ուղարկվել է կարծիքի շահագրգիռ մարմիններին: Ներկայացված դիտարկումների հիման վրա նախագիծը լրամշակվում է: | Նախագծով կարգավորվում են ռազմական գործողությունների հետևանքով ստեղծված պայմաններում և հանգամանքներում անհայտ կորած անձանց իրավական վիճակին առնչվող իրավահարաբերությունները: Մասնավորապես, նախագծով սահմանվում են քննարկվող օրենքի իմաստով անհայտ կորած անձի հասկացությունը, իրավական կարգավիճակը, այդպիսի անձանց և նրանց ընտանիքի անդամների սոցիալական | | Նախագիծը մշակվել է, ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններին՝ կարծիքի: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պաշտպանության, անհայտ կորած անձանց որոնման, հայտնաբերման և վերադարձման հետ կապված հարաբերությունները: Նախագծով սահմանվում են անհայտ կորած անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների իրավունքները, այդ թվում՝ անհայտ կորած անձի անհետացման պատճառների և հանգամանքների, գտնվելու դեպքում՝ գտնվելու վայրի, մահվան դեպքում՝ մահվան հանգամանքների, հուղարկավորման վայրի (եթե այն հայտնի է) վերաբերյալ հավաստի տեղեկություններ ստանալու, իսկ հնարավորության դեպքում՝ նաև մարմինը (մասունքները) | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ստանալու իրավունքը, սոցիալական պաշտպանության իրավունքը, իրենց նախաձեռնությամբ և լիազոր մարմնի համաձայնությամբ, լիազոր մարմնին անհայտ կորած անձանց հետախուզման գործընթացում օգնություն և աջակցություն ցուցաբերելու իրավունքը և այլն: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 6.1.** Վերանայել հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքները՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելիության առնչությամբ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |

| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | 2024 թվականի հոկտեմբերի 24-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է «Ոստիկանության գվարդիայի մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել ոստիկանական մասնագիտացված նոր ծառայություն՝ Ոստիկանության գվարդիա:<br>Ոստիկանության գվարդիան հանդիսանալու է ոստիկանության նոր կառուցվածքի մոդելի 4 հենասյուներից մեկը և լինելու է զուտ ոստիկանական ստորաբաժանում: Ոստիկանության զորքերը դուրս է բերվելու այլ զորքերի կազմից և նրա վրա այլևս չեն տարածվելու զինված ուժերի կանոնագրքերը: Սակայն նոր ծառայությունը շարունակելու է մնալ անվտանգության կարևոր բաղադրիչ:<br>Ոստիկանության գվարդիայի հիմքում լինելու են Ոստիկանության զորքերը, Ճանապարհային ոստիկանության ուղեկցող ստորաբաժանումը, Պետական պահպանության գլխավոր վարչությունը, Հատուկ նշանակության ստորաբաժանումները և Քրեական վարույթին ներգրավված անձանց պաշտպանության ստորաբաժանումը:<br>Ոստիկանության գվարդիայի խնդիրներն են լինելու՝ հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգության ապահովումը, կարևորագույն նշանակության օբյեկտների պետական պահպանությունը բեռների տեղափոխման անվտանգության ապահովումը, ռազմական և արտակարգ դրությունների իրավական ռեժիմների ապահովմանը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը, հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց | 2024թ. հոկտեմբերի 24-ին ընդունվել է «Ոստիկանության գվարդիայի մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել ոստիկանական մասնագիտացված նոր ծառայություն՝ Ոստիկանության գվարդիա: | | «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքն ամբողջական ուժի մեջ կմտնի և ոստիկանության գվարդիան կձևավորի 2025 թվականի նոյեմբերի 1-ին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | անվտանգության ապահովմանն աջակցելը, քրեական վարույթն իրականացնող մարմիններին օժանդակելը: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքն ամբողջական ուժի մեջ կմտնի և ոստիկանության գվարդիան կձևավորի 2025 թվականի նոյեմբերի 1-ին: | | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 6.2.** Բարձրացնել Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական կարգի պահպանությանն առնչվող) ղեկավարների և ծառայողների՝ հավաքների ազատության վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև ձևավորել հավաքների ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման վրա հիմնված պրակտիկան | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Հաշվետու ժամանակահատվածում, հասարակական կարգի պահպանության ոլորտում մասնագիտացված ստորաբաժանում հանդիսացող ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերում, ծառայողների պատրաստության բարձրացման պլաններին համապատասխան, ոստիկանության զորքերի ղեկավար կազմի և պայմանագրային զինծառայողների 70 տոկոս անձնակազմի հետ անցկացվել են դասընթացներ՝ «Հավաքների ժամանակ ազատության վերաբերյալ իրազեկվածության, ինչպես նաև մարդու իրավունքների | | Հասարակական կարգի պահպանության ոլորտում մասնագիտացված ստորաբաժանում հանդիսացող ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության | Վերապատրաստվել է Ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների (հասարակական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման» վերաբերյալ թեմաներով: Միաժամանակ, Իտալիայի Հանրապետության Հռոմ քաղաքում կայացել է «Հասարակական կարգի և անվտանգության ապահովում» թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի թվով 10 ծառայող: Բացի այդ, նշված թեմայով ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստման դասընթացներ են անցել հասարակական կարգի պահպանության աշխատանքներում ներգրավված ՆԳՆ ոստիկանության մեկ այլ՝ Պարեկային ծառայության 58 ծառայողներ: Այսպիսով՝ միջոցառման կատարողական թիրախն ամբողջությամբ ապահովվել է: | | զորքերում, ծառայողների պատրաստության բարձրացման պլաններին համապատասխան, ոստիկանության զորքերի ղեկավար կազմի և պայմանագրային զինծառայողների 70% անձնակազմի հետ անցկացվել են դասընթացներ՝ «Հավաքների ժամանակ ազատության վերաբերյալ իրազեկվածության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության, հույզերի և զանգվածի կառավարման» վերաբերյալ թեմաներով: ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի թվով 10 ծառայող մասնակցել է Իտալիայի Հանրապետությունում կայացած | կարգի պահպանությա ն առնչվող) ղեկավարների և ծառայողների 50%-ը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | «Հասարակական կարգի և անվտանգության ապահովում» թեմայով վերապատրաստման դասընթացին: Նշված թեմայով ՆԳՆ կրթահամալիրում վերապատրաստվել են նաև Պարեկային ծառայության 58 ծառայողներ: Այսպիսով, ՆԳՆ մասնագիտացված ստորաբաժանումների ղեկավարների և ծառայողների առնվազն 50%-ը վերապատրաստվել է: | |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 7.1.** Երաշխավորել շարունակական վերապատրաստումը միջին և ավագ դպրոցների ուսուցիչների համար ժողովրդավարություն, օրենքի և իրավունքի գերակայություն վերաբերյալ թեմաներով: | ՀՀ կրթության, գիտության, սպորտի, մշակույթի նախարարություն |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |

| Կարգավիճակ | Կատարված է | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը 2020 թվականի սեպտեմբերի 7-ին հաստատել է «Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու մասին» N 1162-Ա/2 հրամանը, որով կարգավորվում է հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գործընթացը:<br>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 1162-Ա/2 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 648-Ա/2 հրամանով կատարվել է փոփոխություն և նոր խմբագրությամբ է շարադրվել ուսուցիչների վերապատրաստման չափորոշչի և օրինակելի ծրագրի հավելվածը:<br>Համաձայն հրամանի՝ վերապատրաստման դասընթացի ծրագրում կատարվել են թեմատիկ փոփոխություններ և ժողովրդավարության, օրենքի և իրավունքի գերակայության, «Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները» թեմաների շրջանակում ներկայացվող բովանդակությունը ընդգրկված է նոր օրինակելի ծրագրում:<br>Նախկինում ուսուցիչների վերապատրաստումը իրականացվում էր հերթական նախաատեստացիոն վերապատրաստման շրջանակում, իսկ այժմ վերապատրաստումն իրականացվում է ըստ կարիքի: Ուսուցիչն ինքնագնահատման միջոցով որոշում է, թե վերապատրաստման յուրաքանչյուր բաժնից որ մակարդակի վերապատրաստմանն է ցանկանում մասնակցել: Ուսուցչին գնահատում է նաև տնօրենը, և արդյունքում ձևավորվում է ուսուցչի կարիքը՝ ըստ բաժինների: Գնահատումն իրականացվում է | 2024 թվականի ընթացքում ժողովրդավարության, օրենքի և իրավունքի գերակայության, «Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները» թեմաների ընդգրկմամբ իրականացվել են ստորև նշված վերապատրաստումները.<br>• մշակվել և իրականացվել է «Հակակոռուպցիոն կրթությունը դպրոցում» առցանց դասընթացի վերապատրաստումներ,<br>• իրականացվել է «Դասավանդման ժամանակակ | Վերապատրաստված ուսուցիչների թիվն ավելացել է առնվազն 60%-ով: | Ժողովրդավարության, օրենքի և իրավունքի գերակայության թեմաների ընդգրկմամբ իրականացվել են վերապատրաստումներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում հարցաթերթիկի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով:<br>Միաժամանակ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի օգոստոսի 5-ի N30-Ն «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին» հրամանով սահմանված են ըստ մասնագիտական գործունեության ձևերի ուսուցչից ակնկալվող կարողունակությունները, որոնց թվում է ուսուցչի կողմից յուրաքանչյուր սովորողի վարքագծի, դիրքորոշման և արժեքային համակարգի զարգացման ընթացքի գնահատումը:<br>Միաժամանակ, N 648-Ա/2 հրամանի հավելվածի Բաժին 12-ով հաստատված է ուսուցչի մասնագիտական բարեվարքության, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները, ըստ որի ուսուցիչը պետք է կարողանա կազմակերպել իր աշխատանքը մասնագիտական բարեվարքության, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություններին համապատասխան: Ըստ մակարդակների ուսուցիչը սովորողների մոտ պետք է նպաստի, ձևավորի և տարածի մասնագիտական բարեվարքություն և ժողովրդավարական արժեհամակարգ, ինչպես նաև այս գործընթացում համագործակցի շահագրգիռ կողմերի հետ: | ից մեթոդները» թեմայով վերապատրաստումներ,<br>• իրականացվել է «Ուսուցիչների մասնագիտական չափանիշները» թեմայով վերապատրաստումներ,<br>• ստեղծվել և իրականացվել է «Ինքնուրույն սովորելու հմտությունները» թեմայով հեռավար դասընթացի վերապատրաստումներ,<br>• ստեղծվել և իրականացվել է «Ժողովրդավարական մշակույթի կարողունակությունները» | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | թեմայով հեռավար դասընթացի վերապատրաստումներ: | | |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 9.1.** Կազմակերպել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց սոցիալական ինտեգրման կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներով) անձանց սոցիալական ներառումն ապահովելու ուղղությամբ ՀՀ պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում սոցիալ-վերականգնողական ծառայություններ են պատվիրակվում հասարակական կազմակերպություններին՝ ցերեկային կենտրոններում և խմբային փոքր տներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական և խնամքի ծառայություններ մատուցելու նպատակով:<br>«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում» միջոցառման շրջանակներում ցերեկային կենտրոններում իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ՝ ուղղված նրանց սոցիալական ներառմանը և անկախ կյանքի հմտությունների ձևավորմանը:<br>Ցերեկային կենտրոններում բազմամասնագիտական թիմի գնահատման արդյունքում մշակվում է յուրաքանչյուր շահառուի անհատական սոցիալ-վերականգնողական ծրագիրը, համաձայն որի շահառուները ստանում են իրենց կարիքից բխող՝ լոգոպեդի, հոգեբանի, ծառայություններ՝ խմբային և անհատական պարապունքների միջոցով: Համապատասխան խմբակներում ձեռք են բերում տարրական, նախնական մասնագիտական գիտելիքներ, արհեստագործական հմտություններ, որոնք նպաստում են նրանց զբաղվածությանը, կարողությունների հզորացմանը, հմտությունների զարգացմանը, անկախ կյանքի հմտությունների ձևավորմանը և համայնքային կյանքին նրանց լիարժեք մասնակցությանը:<br>Շուրջօրյա խնամքի ծառայությունները տրամադրվում են առավելագույնս ընտանեկանին մոտ պայմաններում՝ փոքր խմբային տներում: Փոքր խմբային տներում շահառուներն ապահովված են անհրաժեշտ բոլոր պայմաններով և պարագաներով (կացարանով, անհրաժեշտ կահույքով, անկողնային պարագաներով, անկողնային և անձնական սպիտակեղենով, հագուստով, սննդով, | Հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներով) անձանց սոցիալական ինտեգրման և վերաինտեգրման արդյունավետությունը բարձրացված է մասնագիտական մոտեցումների կիրառմամբ: | Հաշմանդամություն ունեցող (այդ թվում՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներով) 478 անձանց սոցիալական ինտեգրումը և վերաինտեգրումն իրականացված է: | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրումը և վերաինտեգրումն իրականացված է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան տնտեսական և հիգիենիկ պարագաներով): Փոքր խմբային տանը շահառուները մասնակցում են համայնքում և դրանից դուրս կազմակերպվող տարբեր մշակութային, սպորտային, ժամանցային և այլ միջոցառումների: Ինչպես և ընտանիքում, բնակիչներն իրենք են որոշում օրվա օրակարգը՝ ինչով զբաղվել, ինչ եփել, ուր գնալ այդ օրը և այլն: Փոքր խմբային տան մասնագետներն աջակցում են նրանց որոշումների կայացմանը և օգնում դրանք իրականացնել: | | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 9.2.** Կազմակերպել պրոբացիայի շահառուներին և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական ինտեգրմանը կամ վերաինտեգրմանն ուղղված օգնությունը՝ ապահովելով անձանց ինքնուրույնությունն ու ներառականությունը հասարակական կյանքում | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Հաշվետու ժամանակաշրջանում ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից իրականացվել են կրթական, մարզական, կրոնական, մշակութային և այլ բնույթի շարունակական միջոցառումներ ու ծրագրեր՝ պրոբացիայի շահառուների և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած անձանց սոցիալական վերաինտեգրման ուղղությամբ: | | ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից կազմակերպվել են պրոբացիայի շահառու հանդիսացող և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած 50-ից | Իրականացվել է պրոբացիայի 15 շահառուների և ազատությունից զրկելու հետ կապված պատիժ կրած 15 անձանց |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ավել անձի սոցիալական ինտեգրմանը կամ վերաինտեգրմանն ուղղված կրթական, մարզական, կրոնական, մշակութային և այլ բնույթի միջոցառումներ ու ծրագրեր: | սոցիալական ինտեգրման և վերաինտեգրման միջոցառումներ: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 10.1.** Բարձրացնել երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող երեխաների, փախստական և ապաստան հայցող երեխաների, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | 2007 թվականի հունիսի 15-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան հաստատել է «Հոկտեմբերի 2-ը»՝ որպես «Ոչ բռնությանը» միջազգային օր, որի շրջանակում Նախարարության նախաձեռնությամբ արդեն երկրորդ տարին երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատություններում և պետության կողմից դրամաշնորհի ձևով «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվում են իրազեկող և կանխարգելիչ հանդիպումներ:<br>ՀՀ բոլոր մարզերի և Երևանի հանրակրթական դպրոցներում աշակերտների մասնակցությամբ պատրաստվել և փակցվել են երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ: | Պաստառները պատրաստվել են հատուկ ուշադրություն դարձնելով հոգեկան առողջության, մտավոր և տեսալսողական խնդիրներ ունեցող, արդարադատության հետ առնչվող երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությանը: | Կատարվել են աշխատանքներ երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:<br>ՀՀ կրթական հաստատությունների ավելի քան 40%-ում փակցված են երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ: | ՀՀ կրթական հաստատություններ ավելի քան 40%-ում փակցված են երեխայի իրավունքների վերաբերյալ պաստառներ: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 10.2.** Սահմանել երեխաների իրավունքների խախտումների հասկացությունը և ստեղծել դրա հաշվառման ու վարման միասնական վիճակագրական համակարգ՝ սահմանելով «երեխայի իրավունքների խախտում» հասկացությունը և լիազորող նորմ՝ երեխայի իրավունքների հաշվառման և վարման միասնական վիճակագրական համակարգի վերաբերյալ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |

| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Համապատասխան | Համապատասխան | Մասամբ ապահովված |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքների և հարակից օրենքների նախագծերի լրամշակման և քննարկումների ընթացքում կարիք է առաջացել իրականացնելու մի քանի փոփոխություններ: Փաթեթը կրկին ներկայացվել է որոշ շահագրգիռ մարմիններին կարծիքի:<br>Միաժամանակ, 2024 թ. հոկտեմբերի 24-ին, ՀՀ Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովների մասնակցությամբ տեղի է ունեցել Նախագծի փաթեթի քննարկում, որին մասնակցել են ՀՀ ԱՍՀ նախարարը, նախարարի տեղակալը, Նախարարության ներկայացուցիչներ, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ ֆինանսների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների ներկայացուցիչներ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ՅՈՒՆԻՍԵՖ-ի փորձագետներ: | Լրամշակված նախագծերը և օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ համապատասխանեցնելով 2024 թ. նոյեմբերի 14-ին ուժի մեջ մտած «Սոցիալական աջակցության մասին» օրենքի և մի շարք այլ օրենքների դրույթներին: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 10.3.** Կատարելագործել կատարողական վարույթի շրջանակներում ծնողի և մերձավոր ազգականների հետ երեխայի տեսակցությունների ապահովման կարգը | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | | |

| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | Մասամբ համապատասխան | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Արդարադատության նախարարի՝ 2024 թվականի հունիսի 28-ի «Երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարման ընթացակարգերը հաստատելու մասին» թիվ 378-Ն հրամանով լուծվել են գործնականում ծնողի և մերձավոր ազգականների հետ երեխայի տեսակցությունների վարույթներով հանդիպող մի շարք խնդրահարույց հարցեր, որոնք նախկինում մասամբ կարգավորվում էին Գլխավոր հարկադիր կատարողի կողմից ընդունված ուղեցույցով:<br>Հաշվի առնելով 10.3 գործողության 2024 թվականի 2-րդ կիսամյակի արդյունքային ցուցանիշը՝ իրականացվել է մշտադիտարկում, որի արդյունքում պարզ է դարձել, որ հրամանի ընդունմամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում գրանցվել են կատարողական վարույթի մասնակիցների կողմից ներկայացվող բողոքների թվաքանակի նվազում: Դրական արդյունքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ սույն հրամանը՝ կատարողական վարույթի կողմերի և նրանց ներկայացուցիչների համար առավել մատչելի և ընկալելի է դարձնում օրենքի համապատասխան դրույթների կիրառումը: | Նվազեցնել երեխայի՝ ծնողի կամ մերձավոր ազգականների հետ շփվելու և դաստիարակություն ստանալու իրավունքների խախտման դեպքերը: | Մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ նշված հրամանի ընդունումից հետո Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում գրանցվել է կատարողական վարույթի մասնակիցների կողմից ներկայացվող բողոքների թվաքանակի նվազում, սակայն երեխայի՝ ծնողի կամ մերձավոր ազգականների հետ շփվելու և դաստիարակություն ստանալու իրավունքների խախտման դեպքերի | Երեխայի՝ ծնողի կամ մերձավոր ազգականների հետ շփվելու և դաստիարակություն ստանալու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարվել: Այնուամենայնիվ ,մշտադիտարկումների և հարցումների արդյունքում արձանագրվել է կատարողական վարույթի մասնակիցների կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարվել: | ներկայացվող բողոքների թվաքանակի նվազում: |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 10.4.** Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը՝ բարելավել երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման ընթացակարգը, ներառյալ՝ առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների համար | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման նպատակով ուսումնասիրվել են Նախարարության ենթակայությամբ գործող երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք ու դաստիարակություն իրականացնող հաստատությունների և «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» միջոցառման շրջանակներում պետության կողմից պատվիրակված ծառայություններ իրականացնող հասարակական կազմակերպությունների աշխատանքում կիրառվող ընթացակարգերը՝ երեխայի լավագույն շահերի գնահատման և որոշման ընթացակարգը բարելավելու նպատակով: Նախարարության ոլորտային ներկայացուցիչները մասնակցել են երեխայի լավագույն շահի գնահատման վերաբերյալ դասընթացների: | Երեխայի լավագույն շահերի գնահատման և որոշման ընթացակարգը բարելավված է և առնվազն 2 վերապատրաստում իրականացված է երեխաների, ներառյալ՝ առանց ուղեկցության և ծնողներից բաժանված երեխաների հետ աշխատող սոցիալական աշխատողների համար: | | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 11.1.** Մշակել և ընդունել մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից տրված հանձնարարականների կատարման, զեկույցների ներկայացման և հաջորդիվ իրականացվող քայլերի ապահովման ազգային մեխանիզմ | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ԱԳ նախարարության կողմից ուսումնասիրվել և ծրագրվել են յուրաքանչյուր տարվա կտրվածքով մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից Հայաստանին տրված հանձնարարականների կատարման ժամկետները:<br>ԱԳ նախարարության համակարգմամբ պատրաստվել և ՄԱԿ տարբեր մարմիններին են փոխանցվել հետևյալ հարցումների պատասխանները.<br>• Դատական համակարգի վրա տնտեսական գործոնների անպատեհ ազդեցության վերաբերյալ դատավորների և փաստաբանների անկախության հարցերով հատուկ զեկուցողի կողմից ներկայացված հարցաշար,<br>• Ռասիզմի հարցերով հատուկ զեկուցողի հարցաշար՝ ռասայական հավասարությունը երաշխավորելու, ռասիզմը կանխելու վերաբերյալ,<br>• Մարդու իրավունքների հարցերով Բարձր հանձնակատարի գրասենյակի կողմից ներկայացված հարցաշար՝ մարդու իրավունքների պաշտպանների գործունեության վերաբերյալ,<br>• Կանանց և աղջիկների թրաֆիքինգի կանխարգելման հարցերով ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի 77/194 բանաձևի կատարման վերաբերյալ տեղեկատվություն,<br>• Թրաֆիքինգի վրա հակամարտությունների ազդեցության վերաբերյալ Թրաֆիքինգի հարցերով հատուկ զեկուցողի կողմից ներկայացված հարցաշար,<br>• ՄԱԿ-ի ԱԽ 1325 բանաձևի կատարման վերաբերյալ հարցաշար,<br>• Մարդու իրավունքների հարցերով Բարձր հանձնակատարի գրասենյակի կողմից ներկայացված՝ արդարադատության իրականացման շրջանակում թվային տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ հարցաշար,<br>• Տարեց անձանց իրավունքների հարցերով հատուկ փորձագետի կողմից ներկայացված հարցաշար,<br>• Միջազգային տեղահանության դիտարկման կենտրոնի կողմից ներկայացված ներքին տեղահանվածների վերաբերյալ հարցաշար, | Ընդունվել է ԱԳ նախարարության կողմից նախապատրաստված և ՀՀ կառավարություն ներկայացված Մարդու իրավունքների ոլորտում միջազգային հաշվետվողականության ամրապնդման և դրանից բխող հետագա քայլերի ապահովման ազգային մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշումը: | | Ուսումնասիրվել և ծրագրվել է յուրաքանչյուր տարվա կտրվածքով մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի տեսչական մարմինների կողմից Հայաստանին տրված հանձնարարականների կատարման ժամկետները և պլանավորվել են դրանց կատարման ուղղությամբ տարվող աշխատանքները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Արտադատական, արագացված կարգով և կամայական սպանությունների հարցերով հատուկ զեկուցողի կողմից ներկայացված հարցաշար,<br>• ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից ներկայացված լրացուցիչ հարցաշար:<br>2024 թ. դեկտեմբերի 2-ից 3-ը կայացել է ՄԱԿ Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեի 114-րդ նստաշրջանը, որի ընթացքում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության 12-14-րդ պարբերական զեկույցների քննարկումը՝ Կոմիտեի հետ երկխոսության ձևաչափով: Նստաշրջանի արդյունքներով կազմվել է ՄԱԿ Ռասսայական խտրականության վերացման հարցերով Կոմիտեի և ՀՀ պատվիրակության միջև դիտարկման արդյունքներն ամփոփող եզրափակիչ եզրակացությունների նախնական նախագիծը:<br>ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցների պաշտպանության նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ և մշակվել է աշխատանքների ժամանակացույց:<br>Ընդունվել է ԱԳ նախարարության կողմից նախապատրաստված և ՀՀ կառավարություն ներկայացված Մարդու իրավունքների ոլորտում միջազգային հաշվետվողականության ամրապնդման և դրանից բխող հետագա քայլերի ապահովման ազգային մեխանիզմ ստեղծելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշման նախագիծը: | | | |

| **Գործողության համար և բովանդակություն** | **Պատասխանատու մարմին** |
|---|---|
| **Գործողություն 12.1.** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետու-թյունում բնակվող անձանց վերաբերյալ համապարփակ և ամբողջական վարչական տվյալների՝ ներառյալ նրանց անհատական տվյալների, հաշվառման հասցեի, տրամադրվող կենսաթոշակի, նպաստի, ինչպես նաև գույքի (այդ թվում՝ հողի) նկատմամբ իրավունքների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում | ՀՀ ներքին գործերի նախարարություն |

| | Կատարողականի թիրախներ | Արդյունքային որակական ցուցանիշներ | Արդյունքային քանակական ցուցանիշներ | Ակնկալվող արդյունքներ |
|---|---|---|---|---|
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է մասնակի** | Մասամբ համապատասխան | | Մասամբ ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Համակարգն անցել է վերջնական թեստավորման փուլը և բոլոր բաղադրիչները մշակվել և շտկվել են՝ բացառությամբ ԼՂ կադաստրի տվյալների:<br>Տեղեկատվական համակարգի գործարկման համար անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտի ընդունում, որը կկանոնակարգի Համակարգից օգտվելու ձևերը և իրավական ուժ կտա Համակարգի միջոցով ստացված տեղեկանքներին և փոխանցվող տվյալներին:<br>Այս ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են: | Համակարգն անցել է վերջնական թեստավորման փուլը» Տեղեկատվական համակարգի գործարկման համար անհրաժեշտ է համապատասխան իրավական ակտի ընդունում, որը կկանոնակարգի Համակարգից օգտվելու ձևերը և իրավական ուժ կտա Համակարգի միջոցով ստացված տեղեկանքներին և փոխանցվող տվյալներին: | | Առկա է նոր էլեկտրոնային համակարգ՝ թարմացված տվյալներով: Տվյալների բազան ամբողջությամբ ներդրվել է և հասանելի է: |

| **Գործողության համար և բովանդակություն** | | **Պատասխանատու մարմին** | | |
|---|---|---|---|---|
| **Գործողություն 12.2.** Մշակել և տարածել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման նյութեր | | ՀՀ ներքին գործերի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | Համապատասխան | Ապահովված |
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | ՀՀ ՆԳՆ նախաձեռնությամբ պատրաստվել է 1 տեսանյութ ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, 2 տեսանյութ Հանրային հեռուստաընկերության կողմից, 3 հրապարակում՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց մասով իրավական կագավորումների վերաբերյալ, միաժամանակ, թեմայի շրջանակներում ԶԼՄ ներկայացուցիչների համար կազմակերպվել է աշխատաժողով, որը ևս լուսաբանվել է:<br>Բացի այդ, ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից պատրաստվել են տեղեկատվական նյութեր՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հեշտացված կարգով ՀՀ քաղաքացիության դիմումների ներկայացման, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի տրամադրման ժամկետների և շահառուների վերաբերյալ: Միաժամանակ, ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը համագործակցել է ԶԼՄ ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում 2024 թվականի ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հրապարակվել է 8 նյութ: | | Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ պատրաստվել և հրապարակվել է 7 տեղեկատվական նյութ, որից 3-ը՝ տեսանյութ, 3-ը՝ հաղորդագրություն: Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստվել է 2 տեսանյութ և 3 | Մշակվել և տարածվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ 2-ից ավել տեղեկատվական նյութ և տեսաձայնագրություն: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | հրապարակում՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց մասով իրավական կագավորումների վերաբերյալ, միաժամանակ, թեմայի շրջանակներում ԶԼՄ ներկայացուցիչների համար կազմակերպվել է աշխատաժողով, որը ևս լուսաբանվել է: ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից պատրաստվել են տեղեկատվական նյութեր՝ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց հեշտացված կարգով ՀՀ քաղաքացիության դիմումների ներկայացման, ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստացած ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց ճամփորդելու կարգի, | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | ժամանակավոր պաշտպանության կարգավիճակի տրամադրման ժամկետների և շահառուների վերաբերյալ:<br>ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության և ԶԼՄ ներկայացուցիչների համագործակցությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ հրապարակվել է հարյուրից ավելի նյութ:<br>ՀՀ ԱՍՀՆ-ի կողմից պատրաստվել և պաշտոնական կայքում հրապարակվել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց կարգավիճակի և իրավունքների վերաբերյալ ընդհանուր 32 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | տեղեկատվական նյութ: | |
| **Գործողության համար և բովանդակություն**<br><br>**Գործողություն 12.3.** Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ապահովում | | **Պատասխանատու մարմին**<br><br>ՀՀ<br>կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | | |
| | **Կատարողականի թիրախներ** | **Արդյունքային որակական ցուցանիշներ** | **Արդյունքային քանակական ցուցանիշներ** | **Ակնկալվող արդյունքներ** |
| **Տարի** | **2024** | | | |
| **Կիսամյակ** | **II** | | | |
| **Կարգավիճակ** | **Կատարված է** | Համապատասխան | | Ապահովված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Կարգավիճակի մասին մեկնաբանություն (բացատրական նշում)** | Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը մեկնարկել է:<br>Ոչ նյութական մշակութային ժառանգության էլեկտրոնային շտեմարանը ներառում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության և դրա պահպանության նպատակով անցկացվող ծրագրերի վերաբերյալ առանձին գլուխ, որում ներառված տվյալները պարբերաբար թարմացվում են:<br>Գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով՝ պարբերաբար նյութեր են գրանցվում, ինչպես նաև ապահովվում է ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ու փոխանցմանը ուղղված ծրագրերի իրականացումը:<br>Միաժամանակ, 2024 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգով դրամաշնորհային մրցույթի արդյունքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության նպատակով ֆինանսական աջակցություն են ստացել «Կրթիր՝ կրթողին» և «Կծեգ» Արցախի բարբառների հանրահռչակում» ծրագրերը: | Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը մեկնարկել է: | | Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրումը ընթացքի մեջ է: |